ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՄԱՐԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 365-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Մարատ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2025 թվականի հունվարի 30-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Մարատ Մանուկյանի (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Միքայել Դանիելյան և Հասմիկ Հակոբյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...)

(...) Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և/կամ այլ հոդվածներին»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը և անդրադառնալով վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին՝ Դիմողը նշում է, որ տվյալ դրույթը հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին,

քանի որ, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացման տեսանկյունից, գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վրա դատական ակտի ազդեցության ողջամիտ հավանականությունը (հնարավորությունը) ինքնին պետք է բավարար լինի տվյալ դատական ակտի անվերապահ բեկանման համար: Մինչդեռ Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթի բովանդակությունից և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունից հետևում է, որ դատական ակտը բեկանվում է, եթե արդեն իսկ ունի փաստացի ազդեցություն գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վրա:

Ըստ Դիմողի՝ այն դեպքում, երբ վիճարկվող դրույթի համաձայն՝ դատական ակտի բեկանման հիմք է միայն գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վրա արդեն փաստացի առկա ազդեցությունը, ապա գործին մասնակից չդարձված անձը զրկվում է դատական ակտով իր համար ապագայում ողջամտորեն հնարավոր իրավական հետևանքները կանխելու, սեփական իրավունքների և պարտականությունների վրա առանց իր մասնակցության քննված գործով կայացված դատական ակտի հնարավոր ազդեցությունը բացառելու հնարավորությունից, որպիսի պայմաններում խաթարվում է վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների ողջ էությունը, քանի որ նման տարբերակումը չունի որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմք:

Դիմողը գտնում է, որ *«(...)* օրենսդրի կողմից գործին մասնակից չդարձված անձին իր իրավունքների ու պարտականությունների վրա ազդող դատական ակտը բողոքարկելու եռամսյա ժամկետը դատական ակտի մասին իմանալու կամ դրա հնարավորությունն ունենալու պահից սահմանելն առավել ցայտուն է ընդգծում կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ այն բանի, որ դատական ակտը պարտադիր բեկանման ենթակա պետք է լինի նաև այն դեպքում, երբ առկա է անձի իրավունքների և պարտականությունների վրա ազդելու ողջամիտ հավանականություն (հնարավորություն, ռիսկ), քանզի հակառակ պարագայում՝ օրենսդիրը պետք է այդ ժամկետը կապեր համապատասխան ազդեցության ի հայտ գալու կամ այդ ազդեցության մասին իմանալու պահի հետ»:

Վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը համեմատելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումներ նախատեսող 152-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հետ՝ Դիմողը պնդում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումը համապատասխանում է Սահմանադրությանը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը, առանց օբյեկտիվ պատճառների ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համեմատելի դրույթից տարբերվելով, հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին՝ քաղաքացիական դատավարությունում գործին մասնակից չդարձված անձանց արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրացումն անհնարին դարձնելով այն պայմաններում, երբ վարչական դատավարությունում գործին մասնակից չդարձված անձանց այդ հիմնական իրավունքների իրացումն ապահովված է: Մասնավորապես՝ Դիմողը նշում է, որ վարչական դատավարությունում բոլոր այն դեպքերում, երբ վարչական գործով կայացված դատական ակտն ուղղակիորեն շոշափում է գործին մասնակից չդարձած անձի իրավունքները, անկախ փաստացի ազդեցություն ունենալու կամ չունենալու, պարտականություններ առաջացրած լինելու կամ չլինելու, ռեալ բացասական հետևանքների առկայության կամ բացակայության հանգամանքներից, միևնույն է, դատական ակտը ենթակա է անվերապահ բեկանման, մինչդեռ, քաղաքացիական գործով կայացված դատական ակտով, անկախ գործին մասնակից չդարձած անձի իրավունքները շոշափված լինելու հանգամանքից, վիճարկվող դրույթի համատեքստում էական և առաջնային է ռեալ հետևանքներ առաջացած լինելու հանգամանքը, որը, սակայն, ոչ միշտ է տեղի ունենում դատական ակտի կայացման պահին:

Արդյունքում Դիմողը եզրահանգում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետն այնքանով, որքանով որպես դատական ակտի պարտադիր բեկանման հիմք չի նախատեսում դատական ակտի՝ գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վրա ազդելու ողջամիտ հնարավորությունը (հավանականությունը), հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ արդյունավետ

դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին՝ չապահովելով իրավունքների լիարժեք և արդյունավետ պաշտպանություն և գործի արդարացի քննություն:

Անդրադառնալով վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասին՝ Դիմողը գտնում է, որ անձը պետք է հնարավորություն ունենա գործի քննությանը մասնակցել որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ցանկացած դեպքում, երբ վճիռը կարող է ազդել վերջինիս իրավունքների կամ պարտականությունների վրա՝ անկախ այդ իրավունքների և (կամ) պարտականությունների մյուս կողմում գտնվող սուբյեկտի՝ գործով կողմ հանդիսանալու և այլ հանգամանքներից:

Դիմողը նշում է, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը երրորդ անձանց՝ դատական ակտով շոշափվելիք իրավունքները չի կապում դատավարության մասնակիցների, կողմերի կամ որևէ այլ անձանց իրավունքների կամ պարտականությունների հետ, և միայն այդ իրավունքների շոշափումն ինքնին անձին դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավելու հիմք է:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին «(…) այնքանով, որքանով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կարգավիճակի ստացումը սահմանափակում է բացառապես այն դեպքերով, երբ կայացվելիք դատական ակտը կարող է ազդել բացառապես այդ գործով կողմերից որևէ մեկի հանդեպ անձի իրավունքների և պարտականությունների վրա կամ հանգեցնել այդպիսի իրավունքների և պարտականությունների ծագմանը՝ մյուս բոլոր դեպքերում, ներառյալ նաև՝ մյուս բոլոր անձանց դեպքերում անձին զրկելով գործին այդ կարգավիճակով մասնակցելու, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն իրացնելու հնարավորությունից»:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ հիմքերով և պատճառաբանություններով.**

3.1. Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է,* ***և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝*** *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը հիշյալ աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող **անհատական դիմումի հիմնավորված լինելու պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրա-**

վունքի/ազատության՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ վիճարկվող օրինադրույթի և այդ հիմնական իրավունքի/ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(...) *անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության* ***անմիջական*** **պատճառահետևանքային կապը:** Այլ կերպ ասած՝ **վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:**

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում **բավարար հիմնավորումներ չի ներկայացրել իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների խախտման, հետևաբար՝ դրանց ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:** Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և 38-րդ հոդվածի 1-ին

մասի համապատասխանությունը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ իր՝ Սահմանադրության վերոնշյալ հոդվածներով ամրագրված հիմնական իրավունքների խախտման, հետևաբար՝ դրանց ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայության վերաբերյալ: Դիմողը սահմանափակվել է վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի)՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին հակասելու վերաբերյալ պնդումների սոսկ վկայակոչմամբ:

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ **դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

3.2. Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե **դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:**

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրված է «(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (…), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթ(ներ)ի սահմանադրականության գնահատման հարցեր**:

Այս համատեքստում, հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից

բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնք **ենթակա չեն Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և 38-րդ հոդվածի 1-ին մասի **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց**:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողն **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակությանը:** Մասնավորապես՝ Դիմողը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և 38-րդ հոդվածի 1-ին մասի **հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել,** իսկ որպես փաստարկ ներկայացված դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով բարձրացված հարցերի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող օրինադրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության, դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականության գնահատում, այլ **թիվ ԵԴ/51131/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում**, **ինչը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման նաև **դիմումում առաջադրված հարցերի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին, 2 և 5-րդ մասերով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Մարատ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

25 փետրվարի 2025 թվականի
ՍԴԱՈ-27